

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԵՎ ԲԱՔՎԻ ՇԵՅԽ ՈՒԼ ԻՍԼԱՄԻ ՀԱՄԱՏԵՂ ԿՈՉԸ ՀԱՅ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ 1905 ԹՎԱԿԱՆԻՆ

1905 Թ.

ՀԵՌԱԳԻՐ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ, ՊԱՏՃԷՆԸ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ՂԱԶԻԻՆ, ԷՋՄԻԱԾՆԻՑ, ՅՈՒՆԻՍԻ 4՝ ԺԱՄԸ 11.30 ՐՈՊ. ԱՌԱՒՕՏԵԱՆ, Հ. 37

Մենք ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Մկրտիչ և Անդրկովկասի Շեյխ-ուլ-իսլամ, հայտնում ենք Անդրկովկասի բոլոր հայ և մահմետական ազգաբնակութեանը: Աչքի առաջ ունենալով այն կորբատաբեր թշնամութիւնը, եղբայրասպանութիւնները և կոտորածները, որ տեղի ունեն երկու դարավոր հարևան ազգութիւնների միջև, և որը 4 ամիս շարունակ տանում է նրանց դեպի բարոյական և տնտեսական կործանում, մենք, հովուապետներս, այսօր Էջմիածնից առաքում ենք ներկայ կոչը և խրատը մեր ամբողջ հաւատացեալ հօտերին և հայրաբար խնդրում ենք ամենքին միանգամ ընդ միշտ վերջ դնել այդ անմիտ և աննպատակ թշնամութեանը, վերաբերվել իրար նախկին եղբայրական վստահութիւնով, սիրոյ և խաղաղութեան անհրաժեշտութեան գիտակութեամբ, որի համար երկու կողմն էլ հանդիսաւոր երդումով խօսք տուին փետրվար ամսին Բագուի եկեղեցիներում և մզկիթներում, աչքի առաջ ունենալով երկու ազգութիւնների բարօրութիւնը և խաղաղ զարգացումը:

Թող անխախտ պահպանէ Աստուած ներկայ ուխտը, և թող Աւետարանն ու Ղուրանը նպաստեն եղբայրական յարաբերութիւնների վերականգնման մեր մեջ, որ անմիտ կերպով ներկում ենք մեր ձեռքերը մեր մօտաւորների արիւնով: Թող երկնային խաղաղութիւնը և սէրը Ձեզ հետ լինի:

Մկրտիչ Կաթուղիկոս Ամ. Հայոց և Շեյխ-ուլ-իսլամ:

Հիմք ֆ. 57, ց-1, գ-361, թ-1: